ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՎԱՍԱԿԻ

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (XX Դ. II ՔԱՌՈՐԴ – XXI Դ. ՍԿԻԶԲ)

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **պ.գ.դ., պրոֆեսոր**
Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **պ.գ.դ., պրոֆեսոր**
Մարուքյան Արմեն Ցոլակի

պ.գ.թ.
Գևորգյան Արշակ Արթուրի

Առաջատար կազմակերպություն՝ **Խաչատուր Աբովյանի անվան**
հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թ. մայիսի 15-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Համաշխարհային պատմության 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2024 թ. ապրիլի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ **պ.գ.թ., դոցենտ Ա. Փաշայան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Թուրքիայի հասարակական-քաղաքական տիրույթում իսլամի և իսլամականության դերի շեշտակի աճի, օսմանյան նոստալգիայի, աթաթյուրքյան սկզբունքներից և առաջնահերթություններից հեռացման տեսանելի ցուցիչներից մեկն է պետական ամենաբարձր մակարդակով օսմանյան 34-րդ սուլթան Աբդուլ Համիդ II-ի (1876-1908 թթ.) անձի ու քաղաքական կերպարի ընդգծված իդեալականացումը, նրա գործունեության և վարած քաղաքականության գովաբանումը, որը հաճախ զուգորդվում է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի կերպարի հետ համեմատականներով: Օսմանյան կայսրությունից ժամանակակից Թուրքիա շարունակականությունը երևում է Աբդուլ Համիդի դեմքի ուրվագծից դեպի Էրդողանի դիմանկար ստվերային անցումներով գովազդային պաստառներում, որոնք կարելի է համարել պետական քարոզչամեքենայի հաջողված քայլ: Աբդուլ Համիդը որպես օսմանյան վերջին ուժեղ առաջնորդ, ում գահընկեցությամբ փակվեց օսմանյան բացարձակ միապետության էջը, XX դարի թուրքական պատմագրության մեջ ամենաուսումնասիրված, բայց միևնույն ժամանակ ամենահակասական կերպարներից է: Աբդուլ Համիդ II-ի անձին ու գործունեությանը տրված գնահատականներն այնքան տարբեր են և այնքան անմիջականորեն են կապված տվյալ պահին երկրում իշխող քաղաքական ուժի նախընտրությունների հետ, որ, նրա կերպարի ներկայացման փոխակերպումներին հետևելով, հնարավոր է հասկանալ թուրքական հասարակության մեջ գերակա խոսույթների ու ընկալումների վերաձևավորման միտումները:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Ատենախոսության ***նպատակն*** է հետազոտել Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո թուրքական պատմագրության մեջ սուլթան Աբդուլ Համիդ II-ի գործունեության ներկայացման ոճի և շեշտադրումների փոխակերպումները՝ ճշգրտելով դրանց ժամանակագրական բաժանումներն ու ցույց տալով այդ փոխակերպման կապակցվածությունը երկրում ընթացող քաղաքական ու գաղափարախոսական պայքարի ու խմորումների հետ, միևնույն ժամանակ դիտարկել, որ, այլ խնդիրների նկատմամբ պատմաբանների ընկալումների փոփոխությանը հակառակ, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության թեմաների վերաբերյալ թուրքական պատմագրության ժխտողական քաղաքականությունը գրեթե անփոփոխ հասել է մեր օրեր:

Այս նպատակն իրագործելու համար մեր առջև դրել ենք հետևյալ ***խնդիրները.***

- Ուսումնասիրել XX դ. II քառորդին և XXI դ. սկզբին գրված թուրք պատմաբան-օսմանագետների առավել կարևոր աշխատությունները:
- Քննության առնել անձամբ սուլթանի, նրա ընտանիքի անդամների և մերձավորների հուշագրությունները, քանի որ դրանցում առկա տեղեկատվության տարաբնույթ մեկնաբանումն է նաև դառնում պատմաբանների իրարամերժ դիրքորոշումների պատճառ:
- Վեր հանել թուրքական պատմագրության մեջ սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի էվոլյուցիայի առանձնահատկությունները:
- Ներկայացնել տարբեր շրջափուլերում թուրքական պատմագրության նկատմամբ քաղաքական իշխանությունների որդեգրած մոտեցումները և վերաբերմունքը:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսությունն ընդգրկում է Թուրքիայի Հանրապետության գոյության հարյուրամյակը (1923-2023): Այս ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Թուրքիայում պետական պատվերով և ուղղորդմամբ պաշտոնական պատմագիտության ձևավորումը անմիջականորեն հաջորդել է հանրապետության հռչակմանը և այդ առաջին փուլից մինչ մեր օրեր Աբդուլ Համիդի կերպարի քննարկումը թեկուզև փոփոխվող հարաբերակցությամբ իր հաստատուն տեղն ունի երկրի հասարակական-քաղաքական խոսույթում:

Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը: Ատենախոսության համար կիրառել ենք պատմահամեմատական մեթոդը: Աշխատանքում համադրվել և համեմատական վերլուծության են ենթարկվել տարբեր գաղափարական կողմնորոշումներ ունեցող պատմաբանների կողմից առաջ քաշված թեզերի ու մոտեցումների տարբերությունները: Բովանդակային վերլուծության հիման վրա ընդհանրացվել են ժամանակագրական տարբեր փուլերում Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի ներկայացման առանձնահատկությունները, ապա կատարվել է դրանց համեմատական-համադրական վերլուծություն:

Ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը: XIX դարի վերջին երկու-երեք տասնամյակներում Օսմանյան կայսրությունում հակահայկականության կտրուկ աճը, որ դրսևորվեց առաջին զանգվածային կոտորածներով, կապված է Աբդուլ Համիդ II-ի անվան հետ, ուստի այս համատեքստում նրա գործունեությունն ու կերպարը հայ պատմաբանների

կողմից համակողմանիորեն ուսումնասիրված են: Աբդուլ Համիդի կերպարի ընկալման փոխակերպումները և իշխանությունների կողմից օսմանյան անցյալի հերոսականացման, մեր օրերում նաև Աթաթյուրքի դերի նվազեցման, այլընտրանքային հերոսի առաջ քաշման, նախագահ Էրդողանի կերպարի հետ զուգահեռմանն առնչվող խնդիրները, սակայն, համապարփակ գիտական ուսումնասիրության նյութ չեն դարձել թուրքական պատմագրության մեջ: Մինչդեռ նման հետազոտությունը կարևոր է թուրքական ներքին տիրույթում ընթացող զարգացումների վերլուծության և արտաքին քաղաքականության ուղենիշների հնարավոր փոփոխության կանխատեսման համար: Սրանք անուղղակիորեն կնպաստեն ոչ միայն Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունն ավելի խորությամբ պատկերացնելու, այլև Հայաստանի արտաքին ու անվտանգային քաղաքականության լրամշակման հարցում: Աշխատության առանձին դրույթներ կարող են օգտակար լինել Օսմանյան կայսրության վերջին տասնամյակների պատմությանը, թուրքական պատմագրության զարգացմանը վերաբերող հարցերով զբաղվող հետազոտողների համար: Բացի այդ, ատենախոսությունն ամբողջությամբ կամ դրա առանձին դրույթները կարող են կիրառվել նաև ՀՀ բուհերի համապատասխան ֆակուլտետների ուսումնական ծրագրերում՝ Օսմանյան կայսրության պատմության, ժամանակակից Թուրքիայում գաղափարախոսական, պատմագիտական խնդիրներին վերաբերող դասընթացներում, ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի համապատասխան բաժիններում:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնը, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի՝ գիտական պարբերականներում հրապարակած տասը հոդվածներում: Ատենախոսությունում ընդգրկված տարբեր խնդիրներ ներկայացվել են նաև հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև դասախոսությունների և աշխատաժողովների շրջանակում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության շրջանակում իրականացված հետազոտության համար օգտագործված գրականության առանցքում են պատմագիտական աշխատություններ, գիտական հոդվածներ, տպագիր և էլեկտրոնային մամուլում, յութուբյան ալիքներում, սոցիալական ցանցերի թուրքական տիրույթում տեղ գտած առանձին հրապարակումներ,

սուլթան Աբդուլ Համիդի ժամանակակիցների կողմից հրապարակված հուշեր: Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին քաղաքական իրավիճակը ներկայացնելու համար մեծապես օգտվել ենք հայ պատմաբանների աշխատություններից: Մասնավորապես, Օսմանյան կայսրության պատմության ընդհանուր համայնապատկերը և դրանում հայերի ներկայացվածությունը լավագույնս արտացոլված են Վ. Բայբուրդյանի[1], Հ. Ստեփանյանի[2] մենագրություններում: «Կարմիր սուլթանի» կառավարման տարիներին հայերի կոտորածների և զանգվածային իսլամացումների ժամանակագրությունը, ծավալներն ու հետևանքները պատկերացնելու տեսանկյունից առանցքային են Ռ. Սաֆրաստյանի[3], Ռ. Մելքոնյանի[4], Գ. Եազըճյանի[5] աշխատությունները: Հանրապետության գոյության առաջին երկու տասնամյակում օսմանյան պատմության նկատմամբ պետական մոտեցումների օբյեկտիվ պատկերն ստանալու համար կարևոր աղբյուր է հանդիսացել Ա. Հովհաննիսյանի հոդվածը[6]: Ատենախոսության հենքը կազմող պատմագիտական աշխատությունների շրջանակն ուրվագծելու, ինչպես նաև թուրքական ժխտողականության միտումները հասկանալու համար արժեքավոր տեղեկություններ են ներառում Ե.

---

[1] **Բայբուրդյան Վ.,** Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:

[2] **Ստեփանյան Հ.,** Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012:

[3] **Սաֆրաստյան Ռ.,** Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականության գիտական բնութագրման հարցի շուրջ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի 30-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզիսների ժողովածու, Երևան, 1998, էջ 7-8, **Սաֆրաստյան Ռ.,** Նախացեղասպանություն (Proto-Genocide). տեսության և պատմության խնդիրներ (Օսմանյան կայսրության օրինակով), Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ III, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2005, էջ 26-47, **Սաֆրաստյան Ռ.,** Ցեղասպանության ծագումնաբանության հարցի շուրջ. դիտավորության հանգամանքի կիրառումը, Հայոց Մեծ Եղեռն 90. Հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 366-378:

[4] **Մելքոնյան Ռ.,** Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010, **Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ.,** Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, 2015:

[5] **Եազըճեան Գ.,** Ապտիլ Համիտ Բ. կարմիր սուլթանը, Պեյրութ, 1980:

[6] **Հովհաննիսյան Ա.,** Թուրքիայում «Նոր պատմական կոնցեպցիայի» մշակման հարցի շուրջը (XX դ. 30-ական թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XV. Երևան, 1989, էջ 5-16:

Սարգսյանի[7], Ն. Հովհաննիսյանի[8], Մ. Զուլալյանի[9], Ռ. Սաֆրաստյանի[10] աշխատությունները: Թուրքական և համաշխարհային պատմության մեջ Աբդուլ Համիդ II-ի բացասական կերպարի ձևավորման, որպես «կարմիր սուլթան» ընկալման ակունքների ուսումնասիրության համատեքստում կարևորում ենք Վ. Պողոսյանի արժեքավոր աշխատությունը[11]: Պատմագիտական տարբեր դպրոցների և նրանց կիրառած մեթոդների ու ոճերի ընդհանուր ընկալման տեսանկյունից մեր աշխատանքի համար օգտակար են եղել ֆրանսիացի պատմագետ Մ. Բլոկի[12], թուրք պատմաբաններ Ն. Բերքեսի[13], Ա. Քըրմըզըի[14], Ն. Օզբեքի[15], Ս. Յազըջըի[16], Գ. Չեթինսայայի[17] աշխատությունները: Հանրապետության հռչակումից հետո թուրքական պատմագրության մեջ օսմանյան անցյալի ընկալման ընդհանուր միտումները դիտարկելու համար օգտվել ենք 1932 թ. թուրք պատմաբանների առաջին կոնգրեսի նյութերից[18]: Բազմակուսակցական շրջափուլում Օսմանյան կայսրության մասին պատմաբանների ընկալումները ներկայացնելու համար օգտակար են եղել

---

[7] **Սարգսյան Ե., Սահակյան Ռ.,** Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963:

[8] **Հովհաննիսյան Ն.,** Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հակահայկական քաղաքականությունն արաբական ժամանակակից պատմագրության գնահատմամբ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1987, №1, էջ 75-88:

[9] **Զուլալյան Մ.,** Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995:

[10] **Սաֆրաստյան Ռ.,** Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009:

[11] **Պողոսյան Վ.,** Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIXդարի վերջ - XX դարի սկիզբ), Երևան, 2011:

[12] **Բլոկ Մ.,** Պատմություն պաշտպանական, կամ պատմաբանի արհեստը, Երևան, 2018:

[13] **Berkes N.,** Türkiyede Çağdaşlaşma, İstanbul, 2003.

[14] **Kırmızı A.,** Sultan II. Abdülhamid'in Kişiliğinde Süreklilik ve Kopuş, Sultan II. Abdülhamid ve Dönemi (ed. Coşkun Yılmaz), İstanbul, No. 12, Aralık 2012, s. 17-30, **Kırmızı A.,** Sultan II. Abdülhamid İmparatorluğun Son Nefesi, II. Abdülhamid Modernleşme Sürecinde İstanbul (ed. Coşkun Yılmaz), İstanbul, 2011, s. 21-45.

[15] **Özbek N.,** Modernite, Tarih ve İdeoloji: II. Abdülhamid Dönemi Tarihçiliği Üzerine Bir Değerlendirme, Türkiye Araştırmaları Literatür Dergisi, İstanbul, 2004, Cilt 2, Sayı 1, s. 71-90, **Özbek N.,** "The Politics of Taxation and the "Armenian Question" during the Late Ottoman Empire, 1876-1908." Comparative Studies in Society and History. Michigan, 2012. 54(4), pp. 770-797.

[16] **Yazıcı S.,** Sultan II. Abdülhamid Örneğinde Tarihsel Algılamanın Değişimi, Journal of History Studies, Ankara, September 2014, Volume 6, Issue 5, s. 233-247. **Yazici S., Ahmed Y.,** Sultan Abdulhamid II: A Case of Changing Historical Perception in Turkey, Turkish Area Studies Review, Kent, 2015, Vol. 25, pp. 38-43.

[17] **Çetinsaya G.,** Abdülhamidi Anlamak: 19. Yüzyıl Tarihçiliğine Bir Bakış, Sosyal Bilimleri Yeniden Düşünmek, İstanbul, 1998 Kasım, s. 137-146. **Çetinsaya G.,** Abdülhamid'in İç Politikası: Bir Dönemlendirme Denemesi, Osmanlı Araştırmaları, XLVII (2016), İstanbul, s. 353-409.

[18] Birinci Türk Tarih Kongresi, Konferanslar, münakaşalar, İstanbul, Maarif Vekaleti, 1932.

թուրքական պատմագրության դասականներից Ք. Քարփաթի[19], Է. Զ. Քարալի մենագրությունները[20]: Այս հեղինակների հաճախ միակողմանի վերլուծությունները թեև հեռու են իրականության օբյեկտիվ պատկերը ներկայացնելուց, սակայն տարիներ շարունակ ուղենիշային են եղել թուրք պատմաբանների տարբեր սերունդների համար: Հատուկ առանձնացրել ենք գրող, տեսաբան Ն. Ֆ. Քըսաքյուրեքի աշխատությունը[21], քանի որ նրա թեզերը ժամանակակից Թուրքիայում հաճախ ընկալվում են որպես դասագրքային ճշմարտություն և նույնությամբ կրկնվում մերօրյա պատմաբանների կողմից: Պատմագրության մեջ Աբդուլ Համիդի ընկալման կերպափոխումը հասկանալու տեսանկյունից կարևորել ենք Զ. Դանըշմանի[22], Է. Աքարլըի[23], Օ. Քոլոլուի[24] աշխատությունները: Մեր աշխատանքում անդրադարձել ենք նաև Աբդուլ Համիդ II-ի գործունեության առանձին ոլորտներ՝ կրթություն[25], ենթակառուցվածքներ[26], հետախուզական ցանցի ստեղծում[27], արտաքին քաղաքականություն ներկայացնող հեղինակներին: Ատենախոսության մեջ կարևորել ենք սուլթանի՝

---

[19] **Karpat K.,** The Politicization of Islam: Reconstructing Identity, State, Faith, and Communtiy in the Late Ottoman State, New York, 2001, Prof. Dr. Kemal Karpat ile Tarih, Osmanlı ve 2. Abdülhamit Üzerine, İlim ve Sanat, Sayı: 44-45, 1997, s. 33-38.

[20] **Karal E. Z.,** Osmanlı Tarihi, Cilt 8, Ankara, 1988, **Karal E. Z.,** Osmanlı Tarihi, Cilt IV, Ankara 1962.

[21] **Kısakürek N. F.,** Ulu Hakan Sultan II. Abdülhamid Han, İstanbul, 2007.

[22] **Danışman Z.,** Osmanlı İmparatorluğu Tarihi, Cilt XIII, Sultan İknici Abdülhamid Han, İstanbul, 1966.

[23] **Akarlı E. D.,** Abdülhamid Döneminde Altyapı Yaptırımlarıyla İktisadi Canlanma Yaşandı, Derin Tarih, İstanbul, Özel sayı 3, 2015, s. 92-93. **Akarlı E. D.,** II. Abdülhamid: Hayatı ve İktidarı, Osmanlı Ansiklopedisi, C.2, Ankara, 1999, s. 253-265.

[24] **Koloğlu O.,** Abdülhamid Gerçeği, İstanbul, 1987, **Koloğlu O.,** Avrupanın Kıskacında Abdülhamit, İstanbul, 2016.

[25] **Koçak C.,** Tanzimat'tan Sonra Özel ve Yabancı Okullar, Tanzimat'tan Cumhuriyet'e Türkiye Ansiklopedisi, C.2, İstanbul, 1985, s. 485-494, **Kocabaşoğlu U.,** Amerikan Okulları, Tanzimat'tan Sonra Özel ve Yabancı Okullar, Tanzimat'tan Cumhuriyet'e Türkiye Ansiklopedisi, C.2, İstanbul, s. 495-500. **Kansu N. A.,** Türkiye Maarif Tarihi Hakkında Bir Deneme, İstanbul, 1930, **Yıldız Ö.,** II. Abdülhamid Döneminde Zirai Eğitime Bir Bakış, Turkish Studies - International Periodical for the Languages, Literature and History of Turkish or Turkic, 2012, Ankara, Volume 7/4, s. 3273-3289, **Yücel H. Â.,** Türkiye'de Ortaöğretim, Ankara, 1994, **Osman N. E.,** Türk Maarif Tarihi, III-IV, İstanbul, 1977, **Sakaoğlu N.,** Eğitim Tartışmaları, Tanzimat'tan Cumhuriyet'e Türkiye Ansiklopedisi, C.2, İstanbul, 1985, s. 478-484, **Kodaman B.,** Abdülhamid Devri Eğitim Sistemi, Ankara, 1991, **Koçer H. A.,** Türkiye'de Modern Eğitimin Doğuşu ve Gelişimi, İstanbul, 1991. **Karataşer B.,** Sultan II. Abdülhamid Dönemi Eğitim Politikası Hakkında Bir Değerlendirme, The Journal of Academic Social Science Studies, Elazig, 2017, Number: 57, s. 423-434, **Tekeli İ.,** Tanzimat'tan Cumhuriyet'e Eğitim Sistemindeki Değişmeler, Tanzimat'tan Cumhuriyet'e Türkiye Ansiklopedisi, C.2, İstanbul, 1985, s. 456-475.

[26] **Kaçar M.,** Abdülhamidin Mega Projesi: Hicaz Demiryolu., Derin Tarih, İstanbul, Özel Sayı 3, 2015, s. 87-91, Hicaz Demiryolu Fotoğraf Albümü, İstanbul, 1999.

[27] **İrtem S. K.,** Abdülhamid Devrinde Hafiyelik ve Sansür, Abdülhamid'e Verilen Jurnaller, İstanbul, 1999, **Kudret C.,** Abdulhamid Devrinde Sansür, İstanbul, 1977, **Şakir Z.,** Sultan Abdülhamid'in Son Günleri, İstanbul, 2011, **Haydaroğlu İ.,** II. Abdülhamid'in Hafiye Teşkilatı Hakkında Bir Risale, Tarih Araştırmaları Dergisi, XVII/28, Ankara 1996, s. 109-133.

կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների և ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ վարած քաղաքականությանը նվիրված հետազոտությունները[28], որոնք հիմնականում տեղավորվում են թուրքական պատմագրության համար դասական «օսմանյան հանդուրժողական հասարակության», «բոլոր ազգային-կրոնական խմբերի բարիդրացիական հարաբերությունների», «մեծ տերությունների հրահրմամբ հայերի և հույների դավաճանության» թեզերի շրջանակներում: Նմանօրինակ հետազոտությունների շարքում արժե ընդգծել որոշակիորեն տարբերվող Ս. Դերինգիլի աշխատանքները, որոնցում հեղինակն անդրադառնում է 1894-1896 թթ. հայերի իսլամացումներին[29] և առնչվող խնդիրներին: Ս. Դերինգիլը նաև ցույց է տալիս Աբդուլ Համիդի օրոք հասարակական կյանքում տառացիորեն «ներդրված, հորինված» մի շարք խորհրդանիշեր, որոնք հետագայում ծառայեցին թուրքական-իսլամական ազգային ինքնության ձևավորմանը[30]: Ինչպես վերևում նշեցինք, վերջին տարիներին թուրքական հասարակական խոսույթում Էրդողան-Աբդուլ Համիդ II նույնականացման միտում կա, որը գիտականորեն և այլ առումներով հիմնավորելու գործին լծված են նաև բազմաթիվ պատմաբաններ՝ իրենց առավելապես գիտահանրամատչելի աշխատություններով: Քարոզչական նշանակություն ունեցող նմանատիպ գրքերը, որոնք շատ դեպքերում խոցելի են գիտականության տեսանկյունից, բավական մեծ հասարակական ազդեցություն են ունենում, ուստի մեր աշխատանքում թուրքական պատմագրության այս ուղղության առանձնահատկությունները ցույց տալու համար ուսումնասիրել ենք առավել մեծ ճանաչում ունեցող պատմաբաններից Մ. Արմաղանի[31], Ս.

---

[28] **Ergül C.,** II. Abdülahmid'in Doğu Politikası ve Hamidiye Alayları, İzmir, 1997, **Eryılmaz B.,** Osmanlı Devletinde Gayrimüslim Tebaanın Yöntemi, İstanbul, 1996, **Kodaman B.,** II. Abdülhamit ve Kürtler-Ermeniler, SDÜ Fen Edebiyat Fakültesi Sosyal Bilimler Dergisi, Isparta, Mayıs 2010, Sayı 21 s. 131-138. **Dönder Y,** II Abdülhamite Yıldız Suikastı, Gaziosmanpaşa Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Yüksek Lisans Tezi, Tokat, 2007, **McCullagh F.,** Abdülhamid'in Düşüşü, Osmanlının Son Günleri, İstanbul 2005, **Şeber N. İ.,** Namlunun Ucundaki Padisah: II. Abdülhamid'e Karşı Planlanan Suikastler, Türkiyat Mecmuası, İstanbul, C. 22/Bahar, 2012, s. 31-59.

[29] **Deringil S.,** The Armenian Question Is Finally Closed: Mass Conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres of 1895-1897, Comparative Studies in Society and History, Cambridge, 2009, Volume 51, Issue 02, pp. 344-371.

[30] **Deringil S.,** Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, İstanbul, 2013, **Deringil S.,** İktidarın Sembolleri ve İdeoloji. II Abdülhamid Dönemi (1876-1909), İstanbul, 2002, **Deringil S.**, They Live in a State of Nomadism and Savagery: The Late Ottoman Empire and the Post-Colonial Debate, Comparative Studies in Society and History, Cambridge, 2003, Vol. 45, № 2, pp. 311-342. **Deringil S.,** The Struggle Against Shiism in Hamidian Iraq, Die Welt des Islams, Leiden, 1990, Volume 30, Issue 1-4, pp. 45-62.

[31] **Armağan M.,** Abdülhamid'in Kurtlarla Dansı 1, İstanbul, 2012, **Armağan M.,** Abdülhamid'in Kurtlarla Dansı 2, İstanbul, 2012, **Armağan M.,** Abdülhamid'in Kurtlarla Dansı 3, İstanbul, 2018, **Armağan M.**, Umutların

Քոջաբաշի[32] թերևս գիտահանրամատչելի համարվող գրքերն ու հոդվածները: Նշենք նաև, որ ներկայացված պատմագիտական աշխատանքներում փաստագրական հենքի տեսանկյունից առանձնահատուկ տարբերություններ չկան: Ավելին, հեղինակների մեծ մասի համար առաջնային սկզբնաղբյուր են հանդիսանում սուլթանի մերձավորների, ընտանիքի անդամների հուշերը, որոնք, սակայն, տարբեր պատմաբանների մոտ տարբեր մեկնաբանություն են ստանում: Այդ իսկ պատճառով ատենախոսության մեջ քննության ենք ենթարկել Աբդուլ Համիդին վերագրվող օրագիրը[33], սուլթանի դուստրերի՝ Այշե և Շադիե Օսմանօղլուների հուշերը[34], նրա անձնական բժիշկ Աթըֆ Հուսեյինի օրագիրը[35], Աբդուլ Համիդի գրագիր և գաղտնընկեր Թահսին Փաշայի հուշերը[36]: Բացի այդ անդրադարձել ենք երիտթուրքական կուսակցության անդամ, համիդյան ռեժիմի դեմ իրենց ատելությամբ հայտնի մի շարք գործիչների հուշերում[37] տեղ գտած խիստ բացասական մեկնաբանություններին, որոնք փաստացիորեն 1908 թ. հեղաշրջումից հետո հասարակական խոսույթում սուլթան Աբդուլ Համիդի կերպարի բացասական ներկայացման գաղափարական հենքն են: Սկզբնաղբյուրային նշանակություն ունի նաև Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հրատարակչության կողմից և Ֆահրեթթին Գյունի խմբագրությամբ տպագրված «Սուլթան Աբդուլ Համիդ II-ը օսմանյան արխիվային փաստաթղթերում» մեծածավալ ժողովածուն[38]: Պատմագրության մեջ արծարծվող հասարակական թեմաների արձագանքը առավել հստակ պատկերելու նպատակով իրականացրել

Yelkeni Tarih, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 66, s. 6, **Armağan M.**, Abdülhamid'in Ruhu Nerede?, Derin Tarih, 2015, İstanbul, Özel Sayı 3, s. 8-13, **Armağan M.**, Sultan Abdülhamid Hakkında Yanlış Bildiğimiz 10 Şey, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 55, s. 90-93, **Armağan M.**, Bizden haberler, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 54, s. 4-5, **Armağan M.**, Abdülhamid ve Erdoğan: Tarihin Buluşturduğu İki Lider, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 54, s. 39-47.

[32] **Kocabaş S.**, Abdülhamid Han Olmasa, Türkiye Cumhuriyeti Olmazdı, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 55, s. 88-89, **Kocabaş S.**, Abdülhamid v Erdoğan'a Yönelik Tasfiye Planlarındaki 5 Benzerlik, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 54, s. 56-59.

[33] **Bozdağ İ.**, Sultan Abdülhamid'in Hatıra Defteri, İstanbul, 1985.

[34] **Osmanoğlu A.**, Babam Sultan Abdülhamid, İstanbul, 2013, **Osmanoğlu Ş.**, Babam Abdülhamid: Saray ve Sürgün Yılları, İstanbul, 2016.

[35] **Hülagü M.**, Sultan Abdülhamid'in Sürgün Günleri. Hususi Doktoru Atıf Hüsein Beyin Hatıraları, İstanbul, 2007.

[36] **Tahsin Paşa**, Yıldız Hatıraları (Hazırlayan: A. Z. İzgöer), İstanbul, 2015.

[37] **Topuzlu C.**, İstibdat-Meşrutiyet-Cumhuriyet Devirlerinde 80 Yıllık Hatıralarım, İstanbul, 1982, **Erkan D.**, II. Abdülhamid'in İlk Mâbeyn Ferîki Eğinli Said Paşa'nın Hâtırâtı I-II (1876-1880), İstanbul, 2011, **Sakin O.**, Vatan Uğrunda Yahut Yıldız Mahkemesi, Amasya Mebusu İsmail Hakkı Paşa'nın Hatıraları, İstanbul, 2014, **Ismail Kemal Bey**, The memoirs of Ismail Kemal Bey, London, 1920, **Bleda Ş. M.**, İmparatorluğun Çöküşü, İstanbul, 1973.

[38] Osmanlı Arşiv Belgelerinde Sultan II. Abdülhamid Han, TBMM Milli Saraylar, (editör **F. Gün**), Ankara, 2016.

ենք նաև թուրքական մեդիայի և սոցցանցերի մշտադիտարկում՝ առանձնանցնելով Էրդողան-Աբդուլ Համիդ համեմատականները ներկայացնող հոդվածներ, հաղորդումներ, հոլովակներ, ֆիլմեր:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ամբողջ ծավալը 183 էջ է:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, ներկայացվում են ատենախոսության նպատակը և խնդիրները, տեսամեթոդական հիմքը, ինչպես նաև քննվում են օգտագործված աղբյուրները, գրականությունը և տրվում է հարցի ուսումնասիրվածության ընդհանուր պատկերը:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է ***«ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II-Ի ՀԱԿԱՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ»***, կազմված է երկու ենթագլխից:

«Աբդուլ Համիդ II-ի կերպարի արտացոլումը ժամանակակիցների հուշերում. սուբյեկտիվ և համեմատաբար չեզոք հուշագրական երկերի քննություն» վերնագրով առաջին ենթագլխում ուսումնասիրվել են սուլթանի դուստրերի, նրա հետ առօրյա, անմիջական շփում ունեցած մարդկանց հուշերը, սուլթանին վերագրվող օրագիրը: Այս աղբյուրների բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ դեռևս Աբդուլ Համիդ II-ի կենդանության օրոք նրա կառավարման շրջափուլի վերաբերյալ հասարակական շրջանակներում գոյություն են ունեցել իրարամերժ, հակասական պատկերացումներ, որոնք հետագայում հիմք են դարձել հանրապետական պատմագրության տարբեր թևերը սնուցող կարծիքների ու գնահատականների ձևավորման համար:

«Աբդուլ Համիդ II-ի կերպարը թուրքական պատմագրության մեջ (XX դարի առաջին կես)» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացվում է մինչև 1940-1950-ականներ սուլթանի քաղաքական կերպարի շուրջ ձևավորված պատմագիտական-հասարակական խոսույթը, որը հանրապետության գոյության առաջին տարիներին կառուցվում էր պաշտոնական քարոզչամեքենայի խիստ վերահսկողության ներքո և արտացոլում էր քեմալական իշխանությունների բացասական վերաբերմունքը օսմանյան անցյալին, այդ թվում նաև Աբդուլ Համիդի գործունեությանը: Սրա հետ մեկտեղ արդեն 1940-ականների կեսերին քաղաքական դաշտում սկսված զարգացումների, ապա նաև բազմակուսակցական համակարգի անցման համատեքստում թուրք

պատմաբանների աշխատություններում ի հայտ է գալիս Աբդուլ Համիդի գործունեության աստիճանական վերագնահատման միտում:

Երկրորդ գլուխը վերնագրված է ***«ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (XX ԴԱՐԻ 50-90-ԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ)»*** և կազմված է չորս ենթագլուխներից:

«Սուլթանի կերպարի փոփոխության առաջին փորձերը թուրքական պատմագրության մեջ» անունով առաջին ենթագլխում խոսվում է Ն. Ֆ. Քըսաքյուրեքի, Օ. Քոլօղլուի, Զ. Դանըշմանի և այլ թուրք պատմաբանների՝ XX դարի II կեսին լույս տեսած աշխատություններում «կարմիր սուլթան»-«մեծ տիրակալ» երկընտրանքի համատեքստում Աբդուլ Համիդ II-ի գործողություններն ու որոշումներն արդարացնող գործոնների փնտրտուքի և Աբդուլ Համիդին որպես իրենից լիովին անկախ հանգամանքների և ստեղծված իրավիճակի զոհ դարձած «մեծ տիրակալ» ներկայացնելու միտումների մասին:

Երկրորդ գլխի երկրորդ՝ ***«Սուլթան Աբդուլ Համիդ II-ի ներքին քաղաքականության գնահատականը 1950-1990-ականների սկզբի պատմաբանների աշխատություններում»*** ենթագլխում վերլուծության են ենթարկվել Աբդուլ Համիդի վարած ներքին քաղաքականության ուսումնասիրությամբ զբաղվող հեղինակների մոտեցումները: Նրանց աշխատություններում բյուրեղացած է տնտեսական, կրթական, մշակութային ոլորտներում ակտիվ աշխատանքով զբաղված սուլթանի կերպար, ում նախաձեռնողականության շնորհիվ կառուցվել է երկաթուղի, կազմակերպվել Օսմանյան կայսրության առաջին մարդահամարը, բարեփոխվել կրթական համակարգը, բացվել են թանգարաններ: Արժե շեշտել, որ համիդիե գնդերի ստեղծումը պատմաբանների կողմից ևս դիտարկվում է իրականացվող ներքին բարեփոխումների համատեքստում:

«Աբդուլ Համիդ II-ի արտաքին քաղաքականության գնահատականը թուրքական պատմագրության մեջ 1950-1990-ականների սկզբին» վերնագիրը կրող երրորդ ենթագլխում վեր են հանվում արտաքին քաղաքականության տիրույթում Աբդուլ Համիդի գործունեությանը թուրք պատմաբանների գնահատականները, ներկայացվում է տարբեր մոտեցումների համադրական քննություն: Ի դեպ, այս փուլում պատկերը հակասական է. սուլթանին մի կողմից անվանում են «Թուրքիայի փրկիչ», սակայն մեղադրում կայսրության կործանման մեջ, գովաբանում են իսլամական աշխարհում օսմանյան ազդեցությունն ուժեղացնելու համար և համարում արևմտականացման թշնամի: Ընդ որում, հատկապես սուլթանի համակիրների ճամբարը ներկայացնող պատմաբանների

աշխատություններում գիտականությունը, փաստերի օբյեկտիվ ներկայացումը երբեմն սկսում են իրենց տեղը զիջել չհիմնավորված հերոսականացմանն ու իդեալականացմանը:

«Թուրք պատմաբանները Աբդուլ Համիդ II-ի «հայկական քաղաքականության» մասին (1950-1990-ականների սկիզբ)» վերնագրով չորրորդ ենթագլխում անդրադարձել ենք սուլթան Աբդուլ Համիդի հակահայկական գործունեությանը թուրք հեղինակների տված գնահատականներին, որոնք բոլորն էլ տեղավորվում են թուրքական ժխտողականության ավանդական քաղաքականության շրջանակներում: Գաղափարական ու քաղաքական մոտեցումների տարբերությանը հակառակ թուրք պատմաբանները համակարծիք են, որ սուլթանից բարեփոխումներ պահանջող եվրոպացիները չափազանցնում էին կայսրությունում ոչ մուսուլմանների դրության աղետալիությունը և փորձում են ապացուցել Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով նախատեսված բարենորոգումների ավելորդությունը: Հայերի կոտորածները ներկայացվում են որպես «ապստամբությունների ճնշում», իսկ դրանց ընթացքում բռնի իսլամացման մեծաթիվ դեպքերի մասին առհասարակ հիշատակում չկա:

«ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ XX ԴԱՐԱՎԵՐՋԻ - XXI ԴԱՐԱՍԿԶԲԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ» վերնագիրը կրող երրորդ գլուխը ունի չորս ենթագլուխ:

«Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կերպարը Թուրքիայում XX դարի վերջի և XXI դարի սկզբի հասարակական-քաղաքական զարգացումների համապատկերում» վերնագրով առաջին ենթագլուխը նվիրված է 1990-2000-ականներին ակտիվորեն փոփոխվող, քեմալական սկզբունքներից աստիճանաբար հեռանալով օսմանյան անցյալի վերարժևորման և իսլամական աշխարհի կենտրոն՝ խալիֆայություն լինելու հանգամանքն ընդգծելու ճանապարհին թուրքական պատմագրության մեջ Աբդուլ Համիդի կերպարի հերոսացմանն ու նույնիսկ ինչ-որ առումով առասպելացմանը: Սուլթան Աբդուլ Համիդի քաղաքական սխալներն ու թերությունները ներկայացվում են այլ կերպ վարվելու անհնարինության և անխուսափելիության պրիզմայով, իսկ նույնիսկ ամենափոքր հաջողությունները մեկնաբանվում են որպես սուլթանի բացառիկ տաղանդի և մտքի ճկունության արդյունք:

Այս գլխի երկրորդ ենթագլուխը կոչվում է ***«Աբդուլ Համիդ II-ը ժամանակակից Թուրքիայի «սոցիալական ինժեներության» հիմնադիր. սուլթանի քաղաքական կերպարի նոր բաղադրիչը»*** և անդրադառնում է

թուրքական պատմագրության մեջ վերջին երկու-երեք տասնամյակում լայն տարածում գտած այն տեսակետին, որ թուրքական ազգ-պետության ձևավորումն անհնար կլիներ առանց սուլթանի կողմից իրականացված բարեփոխումների և առաջին հերթին կրթության ոլորտում նրա վարած քաղաքականության: Պետք է փաստենք, որ ժամանակակից թուրք պատմագրության մեջ սուլթան Աբդուլ Համիդն ընկալվում է որպես Օսմանյան կայսրությունից Թուրքիա ազգ-պետության անցման սկզբնավորող:

«Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հակահայկական քաղաքականության քննությունը XXI դարի թուրք պատմաբանների աշխատություններում» վերնագրով երրորդ ենթագլխում խոսվում է 1990-ականների վերջից Թուրքիայում նկատվող խիստ տաբուների թուլացման պայմաններում մի շարք թուրք հեղինակների մոտ հայկական թեմատիկային վերաբերող փոքրիշատե օբյեկտիվ կամ չեզոք մեկնաբանությունների մասին, որոնք համեմատվում են պետական հովանու ներքո գործող պատմաբանների ժխտողական գնահատականների հետ:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլուխը վերնագրված է ***«Պետության ղեկավարի «պատմականացված» կերպարի ստեղծումը. սուլթան Աբդուլ Համիդ II-նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողան զուգահեռներ»*** և ներկայացնում է պետական քարոզչամեքենային ծառայող պատմաբանների կողմից սուլթան Աբդուլ Համիդ II-ի և ներկայիս նախագահ Ռ. Թ. Էրդողանի մարդկային որակների, համաշխարհային զարգացումներին տված գնահատականների, երկրի ներքին կյանքում ընդունած որոշումների նմանության և քեմալական աշխարհիկ սկզբունքներին դրանց հակադրման ծիրում գրված աշխատությունների վերլուծություն: Ընդ որում, սա ոչ թե մեկ-երկու դրվագ պարունակող երևույթ է, այլ քարոզչական տարբեր մակարդակներում իրականացվող համակարգված քաղաքականություն:

Եզրակացություն: Ուսումնասիրելով XX դարի II քառորդից մինչև XXI դարի սկիզբը թուրքական պատմագրության, ինչպես նաև Թուրքիայի հասարակական-քաղաքական որոշակի զարգացումներում սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի ընկալման առանձնահատկությունները և փոխակերպումների հիմնական հետագիծը՝ եկել ենք հետևյալ հիմնական եզրահանգումների.

1. 1908 թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահընկեցությունից ի վեր նրա կերպարն ու գործունեությունը մշտապես եղել են հասարակական-քաղաքական քննարկումների, իրարամերժ գնահատականների առարկա: Ընդ որում, անձամբ սուլթանի և նրա կառավարման շրջանի քննարկումները, դուրս գալով

պատմագիտության ու քաղաքագիտության շրջանակներից, հաճախ մուտք են գործել նաև հասարակական կյանքի ու զարգացումների տարբեր ասպարեզներ:

2. Վերջին հարյուր-հարյուր քսան տարիների ընթացքում Աբդուլ Համիդի կերպարի հանդեպ ծայրահեղ բացասական կամ ծայրահեղ դրական տեսակետները դարձել են թուրք պատմաբանների գաղափարական մոտեցումների բաժանարար գիծ, որը նաև իր հստակ արտացոլումն է գտել ու գտնում ժամանակի քաղաքական զարգացումների և տվյալ պահի իշխանությունների աշխարհայացքի համապատկերում:

3. Երիտթուրքական կուսակցության իշխանության օրոք սկիզբ առած հակահամիդականությունը, որն ակնառու է ժամանակի մամուլում տեղ գտած արձագանքներից, իր շարունակությունը գտավ նաև Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո միակուսակցական համակարգի պայմաններում, երբ քեմալական սկզբունքների տարածման համատեքստում գրեթե ամբողջապես մերժվեց կամ առավելապես բացասաբար ներկայացվեց օսմանյան անցյալը: Այս ամենն ամբողջությամբ արտացոլվեց նաև թուրքական պատմագրության մեջ:

4. 1940-ականների վերջից և մասնավորապես 1950 թ. Դեմոկրատական կուսակցության իշխանության գալուց հետո իսլամի և իսլամական արժեքների նկատմամբ պետության մոտեցման մեղմացման, մինչ այդ գոյություն ունեցող արգելքների թուլացման համատեքստում ոչ միայն ստեղծվեց Աբդուլ Համիդի կերպարի դրական լուսաբանման հնարավորություն, այլև անուղղակիորեն խրախուսվեց իշխանությունների կողմից: Թուրքական պատմագրության մեջ Աբդուլ Համիդ II-ի բացասական կերպարը գնալով թուլանում էր՝ իր տեղը զիջելով սուլթանի վերաբերյալ չեզոք, դրական գնահատականներին, որոնց հաջորդելու էր նրա հերոսացման գործընթացը:

5. Պատմագիտական շրջանակներում սուլթան Աբդուլ Համիդ II-ի վերարժևորման գործընթացին մեծապես նպաստել են երկրի քաղաքական վերնախավի տրամադրություններն ու հայտարարությունները, մասնավորապես՝ Թուրքիայի նախկին վարչապետ և նախագահ Թ. Օզալի, վարչապետ Ն. Էրբաքանի շուրթերից տարբեր տարիներին Աբդուլ Համիդի մասին ասված գովեստի խոսքերը դարձել են ուղենիշային շատ պատմաբանների համար:

6. 2002 թ. ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո, սակայն, պատմագիտական ոլորտում սուլթան Աբդուլ Համիդի կերպարի շուրջ եղած քննարկումներն աստիճանաբար անցան նաև լայն հասարակական դաշտ՝ դառնալով ոչ միայն մասնագետների, այլև լայն զանգվածների քննարկման առարկա: Պետական

քարոզչությանը համահունչ ոգով մի շարք պատմաբաններ հեղինակեցին սուլթանին գովերգող գրքեր ու հոդվածներ, որոնք մեծամասամբ հիմնված են սուլթանի մերձավոր շրջապատի օբյեկտիվության ակնառու պակաս ունեցող հուշերի վրա:

7. Թուրք պատմաբանների՝ սուլթան Աբդուլ Համիդին վերաբերող աշխատությունները միմյանցից տարբերվում են ոչ միայն դրական/բացասական մեկնաբանություններով, այլև իրենց բնույթով, վեր հանված հիմնահարցերի ընդգրկմամբ ու վերլուծություններով: Հեղինակների մի մասը նախընտրում է կենտրոնանալ ներքին կամ արտաքին որևէ խնդրի վրա և մանրակրկիտ ուսումնասիրել այն, որոշ հետազոտողներն էլ բավարարվում են իրականության մեծ պատկերի ընդհանրական ներկայացմամբ՝ առանց մասնավորեցման: Այս շարքում առավել հետաքրքրական են Օսմանյան կայսրության ժամանակի այլ կայսրությունների հետ տարվող համեմատականները և այն եզրահանգումը, որ, անկախ սուլթանի անձից, կայսրության ավարտը մոտավորապես նույնն էր լինելու:

8. Աբդուլ Համիդին վերաբերող այսպես կոչված ոլորտային հետազոտությունների շարքում թուրք հետազոտողների համար առաջնային են կրթությունը, տրանսպորտը, լրտեսական կամ հետախուզական պրոֆեսիոնալ ցանցի ստեղծումը: Կրթությանն անդրադարձող հեղինակների մեծ մասը դրական լույսի ներքո է տեսնում սուլթանի գործունեությունը, իսկ տրանսպորտային/երկաթուղային ճանապարհների գործարկումը եվրոպական ընկերությունների կողմից պատմաբանների մի մասը համարում է Օսմանյան կայսրության գաղութացմանը միտված քայլ, մյուս մասը՝ դատարկ գանձարանի պայմաններում ժամանակակից տրանսպորտային ցանց ձեռք բերելուն ուղղված հանճարեղ քայլ:

9. Աբդուլ Համիդի կողմից հայերի զանգվածային կոտորածների կազմակերպումը և իրականացումը թուրք պատմաբանները կամ լռության են մատնում, կամ փորձում են հայերին մեղադրել դավաճանության մեջ: Սակայն փաստ է, որ թուրք պատմաբանների գերակշիռ մեծամասնությունը սուլթանի այդ քաղաքականությունը ոչ միայն չի համարում ցեղասպան, այլ դա ներկայացնում է որպես պետականամետ գործելաոճի դրսևորում:

10. 21-րդ դարի սկզբից և հատկապես մեր օրերում թուրքական պատմագրության՝ Աբդուլ Համիդի II-ի քաղաքական կերպարի նկատմամբ հետևողական ուշադրության պատճառների մեջ ընդգծված կարևորություն ունի սուլթանի և ժամանակակից Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանի կերպարների

միջև զուգահեռների անցկացման միտումը: Ընդ որում, այս գործին լծելով ԱԶԿ շահերը սպասարկող պատմաբանների՝ Ռ. Թ. Էրդողանը կարողացել է որոշակիորեն «կոտրել» Աթաթյուրքի անձի պաշտամունքը, հասարակական ընկալման մեջ կարևորել իսլամի դերը և ներկայացնել Օսմանօղլուների դինաստիան առավել շահեկան լույսի ներքո:

11. Թուրքական պետական քարոզչամեքենայի և նրան սպասարկող պատմաբանների կողմից Աբդուլ Համիդ II-ի կերպարի հերոսացումն ու առասպելացումը չի սահմանափակվում պատմագիտական գրքերով, հոդվածներով, մասնագիտական շրջանակներում տեղի ունեցող քննարկումներով, այլ XXI դարի իրողություններին համընթաց լայնորեն շրջանառվում է սոցիալական ցանցերում, մեդիա հարթակներում, որտեղ պատմական զարգացումների իսկությունը, պատմագիտության համար ընդունելի մեթոդաբանության կիրառումը կամ գիտականության պատշաճ մակարդակի ապահովումը հաճախ ստորադասվում են գրավիչ վերնագրերին ու պոպուլիստական հայտարարություններին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Հակոբյան Տ., Աբդուլ Համիդ Երկրորդը թուրք պատմագրության մեջ. արդի միտումներ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2012, VII, էջ 281-290:
2. Հակոբյան Տ., Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կերպարի փոփոխության դրսևորումները թուրքական պատմագրության մեջ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2013, VIII, էջ 168-173:
3. Հակոբյան Տ., Հայկական թեմատիկան Աբդուլ Համիդ 2-րդի հուշագրություններում, Արևելագիտության հարցեր, Երևան, 2015, IX, էջ 137-149:
4. Հակոբյան Տ., Աբդուլ Համիդ II-ը հայերի մասին, Հայագիտության հարցեր, Երևան, 2015, թիվ 3 (6), էջ 61-68:
5. Հակոբյան Տ., Աբդուլ Համիդ Երկրորդի և Միդհատ փաշայի հակամարտության արտացոլումը թուրքական պատմագրության մեջ. համառոտ ակնարկ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2017, XIII, էջ 226-233:

6. Հակոբյան Տ., Աբդուլ Համիդ Երկրորդի կերպարի վերարժևորման արդի միտումները թուրքական պատմագրության մեջ (Սելիմ Դերինգիլի աշխատությունների օրինակով), Արևելագիտության հարցեր, Երևան, 2018, XIV, էջ 95-110:
7. Հակոբյան Տ., Աբդուլ Համիդ II-ի ներքին քաղաքականությունը եվ դրա լուսաբանումը թուրքական պատմագրության մեջ (ուրվագիծ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2018, 2 (208), էջ 154-163:
8. Հակոբյան Տ., Աբդուլ Համիդ II-ի աքսորի տարիները ժամանակակիցների հուշերում, Հայագիտության հարցեր, Երևան, 2018, թիվ 3 (15), էջ 97-107:
9. Հակոբյան Տ., Աբդուլհամիդյան ժամանակաշրջանի կրթության լուսաբանումը թուրքական պատմագիտության մեջ, Էջմիածին, (պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի), Ս. Էջմիածին, 2018, № Ե, էջ 76-89:
10. Հակոբյան Տ., Թուրքական պատմական հեռուստասերիալները որպես պաշտոնական քարոզչության միջոց, Բանբեր Երևանի համալսարանի (բանասիրություն), Երևան, 2019, № 3(30), էջ 93-105:

TATEVIK VASAK HAKOBYAN

THE REFLECTION OF THE POLITICAL IMAGE OF SULTAN ABDUL HAMID II IN THE TURKISH HISTORIOGRAPHY (THE 2nd QUARTER OF XX -EARLY XXI CENTURIES)

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Candidate of Historical Sciences in the field of "Historiography, Bibliography" 07.00.05.

The defense of the dissertation will take place on May 15th, 2024, at 14:00 at the meeting of the HESC Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

SUMMARY

Tendentious idealization of the image of Sultan Abdul Hamid II and praise of his political activities, often accompanied by parallels with the current president Recep Tayyip Erdoğan's approaches, are among the most obvious indicators of distancing from the secular principles of Kemalism and increasing influence of Islam in the public and political life of Turkey. It should be mentioned that the long and difficult period of the reign of the last powerful sultan Abdul Hamid is one of the most studied and at the same time most contradictory topics in the Turkish Republican historiography in terms of the abundance of author interpretations. The evaluations of Hamid's personality and activities, often diametrically opposed in the works of different authors, are so closely linked to the ideological preferences of the dominant political power of the time that they can be considered the litmus test of changes in Turkish socio-political discourse. The dissertation is devoted to thesis is devoted to the study of key transformations in the perceptions of political activities of Sultan Abdul Hamid II in the Turkish republican historiography in the context of their dependence on the political priorities of the ruling elites.

The dissertation paper consists of Introduction, three Chapters, Conclusion, and References.

The Introduction justifies the topic of the dissertation paper and represents the scientific novelty of the research, theoretical-methodological foreground, as well as reviews of the sources included in the paper.

The first chapter, entitled "Formation of the Contradictory Image of Sultan Abdul Hamid II" consists of two sub-chapters, which present the main tendencies of the interpretation of the activity of the sultan starting from the declaration of the republic of Turkey and till the Demcorat Party's rise to power in 1950..

The second chapter, named "Transformation of the Political Image of Abdul Hamid II in Turkish Historiography (50th-early 90s of the XX Century)", consists of four sub-chapters,

which introduce how the negative perception of both domestic and foreign political decisions of the Sultan gradually changed after the transfer of the political power in the country and increasing of tolerance for Islamic values. Special attention is paid to the works written by N. F. Kysakurek, O. Kologlu, E. Aktarli, who had a key influence on the shift of the dichotomy «red sultan-great overlord» in favor of the latter.

The third chapter, titled "The political image of Abdul Hamid II in the Turkish historiography of the late XX - early 21st centuries ", also consists of four sub-chapters, devoted to the analysis of the trend of glorification and even mythologization of the Sultan's image in the light of the active reevaluation of the Ottoman past in public and political discourse of Turkey and, as a result, in modern historiography of the country.

The Conclusion sums up the main results of the research undertaken within the frames of our dissertation paper.

АКОПЯН ТАТЕВИК ВАСАКОВНА

ОТРАЖЕНИЕ ПОЛИТИЧЕСКОГО ОБРАЗА СУЛТАНА АБДУЛГАМИДА II В ТУРЕЦКОЙ ИСТОРИОГРАФИИ (II ЧЕТВЕРТЬ XX -НАЧАЛО XXI ВЕКОВ)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 – «Историография, источниковедение». Защита диссертации состоится 15-го мая 2024 г. в 14:00 на заседании специализированного совета 006 «Всемирная история» КВОН РА, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Одним из наиболее явных показателей отдаления от светских принципов кемализма и роста влияния ислама в общественно – политической жизни Турции является тенденциозная идеализация образа султана Абдул Гамида II, восхваление его политической деятельности, которое зачастую сопровождается параллелями с деятельностью действующего президента Реджепа Таййипа Эрдогана. Следует отметить, что долгий и сложный период правления последнего по-настоящему сильного султана Абдул Гамида – один из самых изученных и вместе с тем противоречивых с точки зрения обилия авторских интерпретаций тем в турецкой историографии. Оценки личности и деятельности Гамида, часто диаметрально противоположные у разных авторов, так тесно связаны с идеологическими предпочтениями господствующей в тот или иной период политической силы, что фактически могут считаться лакмусной бумагой изменений в турецком общественно-политичексом дискурсе. Диссертация посвящена исследованию ключевых трансформаций освещения политической деятельности султана Абдул Гамида II в турецкой республиканской историографии в контексте их зависимости от политичеких приоритетов властных элит.

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подглавами, заключения, списка использованной литературы и приложений.

Во Введении обосновывается актуальность темы, представляются цель, задачи, научная новизна, теоретико-методологическая база исследования, а также обсуждаются представленные источники литературы.

Первая глава «Формирование противоречивого образа султана Абдул Гамида II» состоят из двух подглав, в которых представлены основные тенденции интерпретации деятельности султана после становления республики и до прихода к к власти .Демкоратической партии в 1950 году.

Вторая глава, озаглавленная «Трансформация политического образа Абдула

Гамида II в турецкой историографии (50-ые-начало 90-ых годов XX века)», состоит из четырех подглав, в которых представлено, как в свете изменения политической власти в стране и некоторой толерантности к исламским ценностям постепенно менялось негативное восприятие как внутриполитической деятельности, так и внешнеполитичеких решений султана. Особое внимание уделено работам Н. Ф. Кысакюрека, О. Кологлу, Э. Актарлы, имевшим ключевое влияние на смещение дихатомии «красный султан-великий повелитель» в пользу последнего.

Третья глава, озаглавленная «Политический образ Абдул Гамида II в турецкой историографии конца XX – начала XXI веков», также состоит из четырех подглав, посвященных анализу тенденции героизации и даже мифологизации образа султана в свете активного переосмысления османского прошлого в общественно-политическом дискурсе и, как результат, в современной турецкой историографии

В заключении обобщаются выводы полученные в результате исследования, предпринятого в рамках настоящей диссертационной работы.